«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտի ռեկտորի Ժ/Պ՝
_____ Տ. Գ. ՍԻՄՈՆՅԱՆ
«08» «Հունվարի» 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ <<ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ>> ԺԹ. 00.01 - <<Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության.

Ներկայիս սպառազինության և ռազմական տեխնիկայի, զորքերի կառավարման ավտոմատացված համակարգերի, մարտական նոր ստրատեգիաների և միջոցների ներդրումն ու զարգացումը պատերազմները դարձրել են դինամիկ, էականորեն կրճատել են մարտական խնդիրների կատարման և որոշումների ընդունման ակտը, հանգեցրել են զինվորականի գործունեության վերաիմաստավորմանը, մարտական պատրաստության գործընթացների ժամանակակից տեխնոլոգիաներով զինելուն, ֆիզիկական, մտավոր և հոգեբանական պատրաստականության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը: Ժամանակակից պատերազմները իրենց բնույթով ու տեխնիկական հագեցվածությամբ նորովի պահանջներ են առաջադրում զինվորական անձնակազմի մարտական ակտիվությանը, այդ թվում՝ ֆիզիկական, մտավոր և հոգեկան ոլորտներին:

Ատենախոսության հետազոտական խնդիրները, պայմանավորված են Արցախյան պատերազմներով, առավելապես 2020թ. Արցախյան 44 օրյա պատերազմի և 2022թ. սեպտեմբերյան մարտական գործողությունների արդյունքներով, ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների ուսումնասիրություններն են և միտված են մարտական իրադրություններում հոգեբանական կայունության պահպանմանը՝ ի դեմս մարտունակության բարձրացման, տարբեր մակարդակի

զինծառայողների պատերազմական գործառույթների իրականացման գործընթացում:

Նշված հանգամանքների լուսաբանման հետազոտական հիմանխնդիրների իրականացմանն է ուղղված ատենախոսական աշխատանքը:

Ատենախոսությունը բաղկացած է տեսական և փորձարարական մասերից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության բաժնում ներկայացված են հետազոտության արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, խնդիրները, ընտանիքը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական նշանակությունը, կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փուլերը, հետազոտության փորձաքննությունը: Ատենախոսությունը առանց հավելվածի կազմում է 125 տպագիր էջ: Այն պարունակում է 135 գրական աղբյուր հայերեն և օտար լեզուներով, առկա են 16 գծապատկեր և 11 աղյուսակ:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է «Զինվորական անձնակազմին մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնների հիմնախնդիրները հոգեբանական գիտական գրականության մեջ»:

Ատենախոսը հոգեբանական գործոնների հիմնախնդիրները դիտարկել է որպես զինվորականի գործունեության անբաժանելի բաղադրամաս՝ հուզական բեռնվածության, ինտեսիվությունը, մարտական և հոգեբանական պատրաստության տեսակներն ու մակարդակները:

Առանձին ենթագլխում ներկայացրել է ,,մարտական ակտիվություն,, և ,,մարտունակություն,, եզրույթների կիրառման առանձնահատկությունները և իմաստային տարբերակվածությունը ռազմական, հոգեբանական ու փիլիսոփայական ոլորտի մասնագետների դիտարկումների արդյունքում: Այնուհետ ներկայացվել է ,,մարտական ակտիվության,, վերաբերյալ ատենախոսի սեփական մեկնաբանությունը:

Նույն գլխի 3-րդ և 4-րդ ենթագլուխները անդրադարձ են «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոններին և հոգեբանական կայունության տարբեր մոտեցումներին»:

Ատենախոսության երկրորդ գլուխը ներկայացնում է՝

ա/ հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդներն ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը,

բ/ փորձագետների հետ իրականացված կոնտենտ հետազոտության արդյունքների դասակարգման հիմնահարցերը,

գ/ զինվորական մարտական ակտիվությունը պայմանվորող հոգեբանական գործոնների հետազոտում, ի դեմս հուզական ինտելեկտի և ագրեսիվության ցուցանիշների:

Ատենախոսության երրորդ՝ «Զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնների միջին ցուցանիշների վերլուծություն, համահարաբերակցային վերլուծություն» գլխում վերլուծվել է մարտական գործողություններին մասնակից և մասնակցություն չունեցած զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության, ռիսկի գնալու պատրաստակամության և սթրեսակայունության միջին ցուցանիշների արդյունքները:

Ակնհայտ է դարձել, որ տարբեր են հուզական ինտելեկտի արտահայտվածության աստիճանները հետազոտական խմբերում, այսինքն մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտն ավելի բարձր է քան մասնակցություն չունեցած զինծառայողներինը:

Հոգեբանական գործոնների համահարաբերակցային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ փորձարարական և ստուգիչ խմբերի հոգեբանական գործոնների հարաբերակցական կապերը, հավաստիության մակարդակով և բնույթով էապես տարբերվում են, ուստի տարբեր է նաև հետազոտական խմբերում մարտական ակտիվության աստիճանն ու բնույթը:

Թեկնածուական ատենախոսության և սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի թվանիշին ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հեգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին: Ծավալուն, տեսական և էմպետիկ աշխատարար հետազոտությունների արդյունքներով ատենախոսն հաջողվել է լուծել իր կողմից առաջադրված նպատակն ու խնդիրները:

Որպես հետազոտական աշխատանք առկա են որոշ թերություններ և բացթողումներ, որոնք չեն արժեզրկում ատենախոսության գիտագործնական ու տեսամեթոդական մակարդակը:

1. Դրանց թվին են դասվում.

ա/ Տեխնիկական բնույթի թերություններ ու վրիպակները, թեպետ առկա են աշխատանքում ծավալուն և բովանդակալից հավելվածներ, որոնք պարունակում են համապատասխան ցուցանիշներ, սակայն բովանդակային համապատասխան բաժնում ներկայացված R –ի արժեքները ներկայացված են /R=212/ առանց 0,-ի կամ առանց. 212-ի /բոլոր տեղերում/:

բ/ Աշխատանքում գծապատկերների 12 և 14-ում ներկայացված 3 և 4 կապերի փոխարեն սեղմագրում նույն գծապատկերները /3 և 4/ ներկայացված են միայն 1-

ական ամուր կապերով, թեպետ առկա են նաև այլ կապեր, որոնց մասին խոսք չկա:

գ/ Աշխատանքում առանձին բառեր անհասկանալի են կամ էլ կարելի էր դրանք ներկայացնել մատչելի տարբերակով, օրինակ՝ /...փորձագետների, այսպես կոչված հաստատութենական խումբ».../ /էջ՝ 59/, «Կիրառվել է խորքային հարցազրույցի մեթոդը» ինչո՞վ է տարբերվում հանրահայտ հարցազրույցի մեթոդից /նույն տեղում/:

դ/ Հեղինակը նույն իրավիճակում անվանակոչում է «անձնային որակներ», ապա նշում «անձնային հատկություններ» /էջ՝ 60/, թեպետ կոնտենտ վերլուծության բաժնում /էջ՝ 67/ անձնային որակների տակ ըստ փորձագետների գնահատման առկա են դիրքորոշումները, համոզմունքները, վարքը, վախը, տագնապը, աֆեկտը, խուճապը, հույզերը և այլն /էջ 67-69/:

2. Թեպետ հեղինակը օգտվելով Յու. Ֆոմինայի «հոգեբանական պատրաստության» տեսությունից, աշխատանքում ամբողջությամբ ներկայացրել է «հոգեբանական, ֆիզիկական, ռազմական, մարտական պատրաստման» տերմինները, բազմիցս ցիտելով ուրիշ աղբյուրների «պատրաստություն» տերմինը: Առանձին դրվագներում չի տարբերակել «պատրաստություն», «պատրաստվածություն» և «պատրաստականություն», որոնք համապատասխանաբար կարտացոլեին գործընթաց, աստիճան և վիճակ հասկացությունները:

3. Չի ներկայացված հետազոտված զինծառայողների տարիքը և ծառայողական ստաժը /ժամանակահատվածը, զինվոր կար, որ պատերազմից շաբաթներ առաջ էր մեկնել ծառայության/, ինչը կարող էր էական դեր խաղալ հատկապես տագնապայնության, սթրեսակայունության, հուզական ինտելեկտ և ընդհանրապես մարտական ակտիվության ցուցանիշներում:

4. Հիմնախնդրի մշակվածության աստիճանը, բաժնում ներկայացված առանձին հեղինակներ՝ Պ. Զիլբերման, Լ. Միտինա, Մ. Դյաչենկո, Լ.Աբոլին, Բ. Սմիրնով, Ե. Դոլպոլոգով, Վ. Զինչենկա, դրանց թվում նաև հայտնի հոգեբաններ՝ Ա. Ադլերը, Բ. Անանևը, Լ. Բոժովիելը, Օ. Դաշկևիչը, Կ. Պլատոնովը, Մ. Զիչենկոն և ուրիշներ, որոնք մարտական ակտիվության հոգեբանական գործոնների ուսումնասիրություններ են կատարել կամ առկա են առանձին մեջբերումներ Վ.Մ. Բեխտերևի «խուճապ-ինքնաապահովման բնազդ», «հուզական ինտելեկտը որպես ակտիվության մղող գործոնի ուսումնասիրվել է Ջ. Մեյերի, Պ. Սալավեյի, Դ. Կառուզեի, Դ. Գոլմանի» /էջ՝ 41/ գրականության ցանկում ներկայացված չեն:

Նշված անճշտություններն ու թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտահետազոտական արժեքը, դրանք կարելի է ընդունել որպես ցանկություններ ու առաջարկներ:

Այնուամենայնիվ Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի ատենախոսական աշխատանքն ավարտուն հետազոտական գիտագործնական և տեսամեթոդական ուսումնասիրություն է, որի արդյունքում կատարված են արժեքավոր տեսական ու գործնական եզրակացություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները» ԺԹ. 00.01 - <<Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն>> մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը իրենից ներկայացնում է հիմնարար տեսական, գիտագործնական հետազոտություն և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Սվետլանա Մարգարի Բաղդասարյանը արժանի է հոգեբանական գիտությունների գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է Ա. Լալայանի անվան Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 26.12.2023թ նիստում (արձանագրություն թիվ 6), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ., դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Ա.Ա. Գյորգյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր **Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ**

Հաստատում եմ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**

«05» «Հունվարի» 2024թ